# ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ժ. Դ. ԷԼՉԻԲԵԿՅԱՆ

Հայ ժողովրդի մ. թ. ա. VI—III դարերի քաղաքական պատմությունը սերտորեն կապված է իշխող դինաստիայի՝ Երվանդունիների վարած քաղաքականության հետ։ Նրանց գործունեության շուրջ 400 տարիների պատմության մասին սկզբնաղբյուրների չափազանց սուղ վկայությունները ցրված են Մովսես Խորենացու, ինչպես նաև հունական ու լատինական պատմիչների՝ Քսենոփոնի, Դիոդորոս Սիկիլիացու, Պոլիենոսի, Պլինիոս Ավագի, Ստրաբոնի, Կուրտիոս Ռուփոսի և այլոց երկերում։ Քսենոփոնը իր ուշադրության կենտրոնում ունեցել է Աքեմենյան Պարսկաստանի, իսկ մյուսները՝ Ալեքսանդր Մակեդոնացու, Սելևկյանների ու փոքրասիական հելլենիստական երկրների պատմությունը, որի հետևանքով Հայաստանի մասին նրանց վկայությունները թռուցիկ բնույթ ունեն։ Անտիկ հեղինակների վկայությունները որոշ չափով լրացվում են Փոքր Ասիայում և Հայաստանում գտնված արձանագրություններով։

Երվանդունիների դինաստիայի անընդմիջության մասին պատմագրության մեջ դեռևս միասնական կարծիք գոյություն չունի։ Վերջնականապես լուծված չէ նաև դինաստիայի ծագման խնդիրը։ Երվանդունիների դինաստիայի անընդմիջության խնդրի լուծմանն առայժմ խանգարում է այն հանգամանքը, որ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Քսենոփոնի «Կյուրոպեդիայի» տվյալները Երվանդունիների մասին վերաբերում են մ. թ. ա. VI դարին։ Այնուհետև «Արմինա» երկիրը առաջին անգամ հիշատակվում է Բիսիթունյան (Բեհիսթունյան) արձանագրությունում, իսկ «Արմենիա» երկիրը առաջին անգամ նշվում է Հեկատեյոս Միլետացու (մ. թ. ա. 546—480 թթ.) կազմած՝ Օյկումենեի քարտեզի վրա։ Պատմահայր Հերոդոտը (մ. թ. ա. 490—424 թթ.) ոչինչ չի հաղորդում Հայաստանի իշխող դինաստիայի մասին, նա ավելի հանգամանորեն խոսում է Հայաստանի, նրա տերիտորիայի վրա կազմված աքեմենյան սատրապությունների մասին։ Հաջորդ վկայությունները Հայաստանի սատրապ Օրոնտասի (Ὀρόντας) և Հայաստանի մասին նույն Քսենոփոնի «Անաբազիս» աշխատությունից են և նկարագրում են մ. թ. ա. 401—400 թթ. դեպքերը։ Բիսիթունյան արձանագրությունից (520 թ. մ. թ. ա.) մինչև Քսենոփոնի «Անաբազիսի» վկայություններն (401—400 թթ.) ընկած մոտ 120 տարիների Հայաստանի պատմությունը մնում է անհայտ, և մենք չգիտենք, թե ովքեր են եղել Հայաստանի առաջին սատրապները։

Երվանդունիների ծագման մասին աղբյուրների վկայությունները բազմաբնույթ են։ Ըստ Մովսես Խորենացու մ. թ. ա. VI դարի առաջին կեսին Հայաստանում իշխում էր Երվանդ Սակավակյացը և նրա որդի Տիգրանը, որոնք ժամանակակից էին մեդական թագավոր Աժդահակին։ Նրանք ունեն բնիկ տեղական ծագում։ Օտար աղբյուրները Երվանդունիների ծագումը կապում են Աքեմենյանների կամ նրա զինակիցներից՝ Հյուղարնեսի անվան հետ։ Պերգամոն

քաղաքից 12 կմ հեռավորության վրա՝ Բորիաջիք կոչված վայրում գտնված արձանագրությունն արդեն նշում է, որ Օրոնտեսը (Ὀρόντης —ըստ արձանագրության) բակտրիական ծագում ունի։

Աղբյուրներում տիրող այս վիճակը տեղիք է տվել կասկածի։ Արդյոք գոյություն ունեցե՞լ է մի միասնական դինաստիա. եթե V դարի Օրոնտեսները նույն VI դարի Երվանդունիներն են, ապա ինչպե՞ս հաղթահարել Երվանդունիների աքեմենյան ծագման և Պերգամոնի արձանագրության Օրոնտեսի՝ բակտրիացի լինելու հակասությունը։ Գ. Տիրացյանն, օրինակ, գրում է. «Այս տվյալները խախտում են առայժմ մեր պատկերացումները Երվանդունիների միասնական դինաստիայի գոյության մասին, և թույլ են տալիս ենթադրելու նաև, որ Երվանդ երկրորդով Հայաստանում սկսել է իշխել մի նոր դինաստիա, որը, գուցե, անմիջական կապ չունի VI դարի հայ իշխանավորների հետ»[1]։

Նպատակ չունենալով մանրամասն անդրադառնալ փաստերի առաջին խմբից բխող՝ Երվանդունիների ծագման հայկական վարկածի մանրամասն քննարկմանը (այդ մասին բազմիցս հանգես են եկել ակադ. Հ. Մանանդյանը[2], Ս. Երեմյանը[3], Գ. Տիրացյանը[4]), մենք միայն ընդհանուր գծերով կամփոփենք Մովսես Խորենացու հաղորդած վկայություններն ու նրանցից բխող եզրակացությունները։

«Հայոց պատմության» Ա գրքի ԻԲ գլուխը Խորենացին սկսում է այսպես «Արդ՝ այժմ անցից ի թիւ մերոց արանց, մանաւանդ թէ թագաւորաց, մինչև ցտերութիւնն Պարթևաց։ Քանզի ինձ այսոքիկ արք ի մերոց թագաւորաց են սիրելիք, որպէս բնիկք և իմոյ արեան առուք և հաւաստի հարազատք»... «Զի մերոյ աշխարհիս բնիկք պսակաւորք արք այնոքիկ, զորոց զանուանսն ի ներքոյ դրոշմեսցուք»։ Հետևում է Մարաց և Հայոց թագավորների սինխրոնիկ աղյուսակը, որն ավարտվում է հետևյալ անուններով.

| Մարաց թագավորներ | Հայոց թագավորներ |
|---|---|
| Կվաքսարես | Երվանդ Սակավակյաց |
| Աժդահակ | Տիգրան |

Խորենացու աշխատության համապատասխան գլխի համադրումը Հերոդոտի առաջին գրքի, ինչպես նաև Քսենոփոնի «Կյուրոպեդիայի» տվյալներին, թույլ է տվել եզրակացնելու, որ Խորենացու Երվանդ Սակավակյացը և նրա որդի Տիգրանը պատմական անձնավորություններ են, ժամանակակից միդական վերջին թագավոր Աստիագես-Աժդահակին (մ. թ. ա. 584—553 թթ.)։ Ակադ. Հ. Մանանդյանը[6], Ս. Տ. Երեմյանը[7] ընդունում են, որ Քսենոփոնի վկայի

---

1 Գ. Տիրացյան, Երվանդունիները Հայաստանում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 6, էջ 69—70։

2 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, Երևան, 1945, էջ 35—60։

3 Ս. Տ. Երեմյան, Հայկական առաջին պետական կազմավորումները, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 91—119։

4 Գ. Տիրացյան, նշվ. աշխ., և «Անարասիրը» և Հայաստանը (տե՛ս Քսենոփոն. Անարասիս, Երևան, 1976).

5 И. М. Дьяконов. История Мидии. М.—Л., 1956. էջ 350—351։

6 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 35։

7 Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 104։

հիմքում ընկած են տեղական ավանդություններն[8] ու հիշողությունները, որոնց նա ծանոթացել է իր և հույն զորքի՝ մ. թ. ա. 401—400 թթ. Արմենիայի միջով կատարված հայտնի նահանջի ժամանակ։

Երվանդունիներին Աքեմենյանների հետ կապող կարևոր վավերագիրը Կոմագենե երկրի Անտիոքոս Ա թագավորի (մ. թ. ա. 69—34 թթ.) կառուցած սրբատեղիի արձանագրություններն են՝ նվիրված հայրական և մայրական գծով իր նախնիներին։ Անտիոքոս Կոմագենացին իրեն համարում է Երվանդունի, հայրական գծով նրա անմիջական նախնին Վշտասպի որդի Դարեհ Աքեմենյանն է։ Սրբատեղիի արևմտյան հարթակի արձանագրությունների շարքն ունի այսպիսի պատկեր[9].

| | |
|---|---|
| 1. Դարեհ | 5. Արտասուրա |
| 2. ? | 6. Արոանդես (սատրապ) |
| 3. ? | 7. Արոանդես (թագավոր) |
| 4. Արոանդես | 8. ...գանես։ |

Դարեհին հաջորդող երկու թագավորների անունները մեզ չեն հասել[10]։ Աղյուսակի չորրորդ կետում հիշատակված Օրոնտեսը աղբյուրներում առայժմ անհայտ է։ Նեմրուդ լեռան արձանագրությունը միակ վկայությունն է նրա մասին։ Արտասուրան հաջորդ՝ վեցերորդ կետում հիշատակված Արոանդեսի հայրն է (Պերգամոնի արձանագրությունը հաստատում է նույնը)։

Արոանդեսը Հայաստանի Աքեմենյան սատրապն էր մ. թ. ա. V դարի վերջերին և IV դարի սկզբներին։ Արոանդեսին առնչվող արձանագրությունը հայտնում է Արտաքսերքսես Մնեմոնի հետ՝ Արոանդեսի ազգակցական կապի մասին։ Նա ամուսնացած էր վերջինիս Ռոդոգունե դստեր հետ[11]։ Պլուտարքոսը (Artax., XXVII), Քսենոփոնը (Anab., III, 5, 17, IV, 4, 1—3) նույնպես վկայում են Օրոնտեսի և Արտաքսերքսեսի այդ ազգակցական կապի մասին։ Օրոնտեսն ապրել է բուռն քաղաքական կյանքով։ Եթե IV դարի սկզբներին նա աջակցում էր Արտաքսերքսես Մնեմոնին և մասնակցում պարսկական տերության վարած պատերազմներին որպես պարսկական ցամաքային զորքերի

---

8 Ն. Ադոնցը (Дионисий Фракийский и армянские толкователи. Петроград. 1915, էջ 129), Հ. Մանանդյանը (Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, էջ 9, 221), Մ. Արեղյանը (Հայ վիպական բանահյուսություն, Երկեր, Ա, 1966, էջ 134—139), ցույց են տվել, որ Տիգրան Երվանդյանի ժամանակ Մեդական պետությունից Հայաստանի ազատագրման տպավորություններն այնքան ուժեղ են եղել սերունդների վրա, որ ստեղծվել են բազմաթիվ ավանդություններ՝ կազմելով հայկական էպոսի հնագույն շերտերից մեկը։ Խորենացու մոտ այդ ավանդությունների էպիկական ցիկլը միահյուսվել է Տիգրան Մեծին վերաբերող տեղեկություններին։

9 Նեմրուդ լեռան սրբատեղին պեղվել է XIX դարի վերջերին։ Տե՛ս K. Humann und O. Puchstein, Reisen in Kleinassien und Nordsyrien, Textband, Berlin, 1890, էջ 308։

10 Գ. Խ. Սարգսյանը կարծում է, որ ջարդված սալերից մեկը պետք է նվիրված լիներ Արտաքսերքսես Մնեմոնին, մյուսը՝ Քսերքսեսին կամ գուցե Ստրաբոնի կողմից որպես Օրոնտյանների տոհմի հիմնադիր հիշատակվող Հյուդարնեսին։ Տե՛ս նրա Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 31։

11 «Արոանդեսին, Արտասուրայի [որդուն], որն ամուսնացած էր Հոռոդոգունե արքայադստեր՝ արքայից-արքա մեծ Արտաքսերքսես Մնեմոնի դստեր հետ։ Օգտագործված է Գ. Խ. Սարգսյանի թարգմանությունը, նշվ. աշխ., էջ 30։

հրամանատար (Կիպրոսի թագավոր Եվագորասի դեմ պայքարը)[12], ապա իր կյանքի վերջին շրջանում նույն եռանդով ղեկավարում էր հակաաքեմենյան սատրապական ընդհանուր ապստամբությունները, պայքարին մասնակից անելով նույնիսկ հունական ռազմական ուժ։ Սատրապական այս ապստամբությունների մասին աղբյուրներում պահպանվել են առանձին տեղեկություններ[13]։

Հաջորդ Արոանդեսը, որը Նեմրուդ լեռան արձանագրության մեջ արդեն ունի «թագավոր» տիտղոսը, ըստ Արիանոսի[14] և Կուրտիոս Ռուփոսի[15] վկայությունների, մասնակցել է Արբելայի ճակատամարտին (մ. թ. ա. 331 թ.) որպես հայկական զորքի ղեկավար, իսկ Աքեմենյան տերության փլուզումից հետո, ինչպես ենթադրում է Հ. Մանանդյանը, Հայաստանը անկախություն է ստացել, իսկ նրա կառավարիչ Օրոնտեսը՝ «թագավոր» տիտղոսը[16]։ Խորենացին նույնպես, թերևս, հիշատակում է այս Օրոնտեսին։ Նա կրում է հայկական ավանդական Երվանդ անունը։ Ըստ Խորենացու, այս Երվանդի ժամանակ Հայաստանում ծագել է ինչ-որ խառնաշփոթություն՝ «Քանզի Երուանդ ոմն, որդի կնոջ Արշակունւոյ, թագաւորէ յութերորդ ամի Դարեհի վերջնոյ»[17]։

Երվանդ վերջինի մասին մանրամասն տեղեկություններ պահպանվել են ինչպես Խորենացու, այնպես էլ Ստրաբոնի մոտ։ Ստրաբոնը գրում է. Հայաստանի «...վերջին իշխողն էր Օրոնտեսը, յոթ պարսիկներից մեկի՝ Հյուդարնեսի հետնորդը։ Դրանից հետո երկիրը բաժանվեց երկու մասի Անտիոքոս Մեծի ստրատեգոսներ Արտաքսիասի և Զարիադեսի կողմից»[18]։

Հիմնվելով Ստրաբոնի՝ Օրոնտես վերջինի Հյուդարնեսից ծագած լինելու մասին այս վկայության վրա, ակադ. Ստրուվեն[19] գրում է, որ Հյուդարնեսը Դարեհի ժամանակ նշանակվել էր Հայաստանի սատրապ և նրա հաջորդները իշխում էին Հայաստանում մինչև Ալեքսանդր Մեծի ժամանակները։ Մ. Ա. Դանդամաևը[20] Հյուդարնյանների սատրապության ժամկետը երկարաձգում է, հասցնում մինչև Անտիոքոս Մեծի ժամանակները։ Կ. Թումանովը[21] կարծում է, որ «Օրոնտես Ա-ից առաջ, անկասկած, երկու Հյուդարնյաններ հաջորդաբար Հայաստանի սատրապներ են եղել։ Սրանք են Հյուդարնես (3-րդ) և նրա որդի Տերիտուքմեսը»։ Իսկ Գ. Տիրացյանը իր վերջին հոդվածում գրում է. «Ի սկզբանե Դարեհ Առաջինը Հայաստանը հանձնեց որպես սատրապություն Հյուդարնեսին և նրա հետնորդները ժառանգաբար կառավարում էին այն։ Հավանական է, որ Հյուդարնեսի նույնանուն որդին մի կողմից և Օրոնտասի՝ Նեմրուդ լեռան արձանագրություններում հիշատակվող հայրը՝ Արտասուրան, և պապը՝ նույն-

---

12 Polyaen, VII, 14, 1.

13 Polyaen, VII, 14, 2—3.

14 Arriani, III, 11, 7.

15 Curtius Rufus, IV, 12, 10.

16 Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., էջ 93 և հտ.։

17 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», գիրք Բ, ԼԷ։ Մովսես Խորենացին այս Երվանդին նույնացնում է Երվանդ վերջինի հետ, այն Երվանդի, որի ժամանակ հայկական գահն անցել է Սելևկյան սատրապ Արտաշեսին։

18 Strab., XI, 14, 15.

19 В. В. Струве. Этюды по истории Северного Причерноморья, Кавказа и Средней Азии, Л., 1968, էջ 218, ծանոթ. 56։

20 М. А. Дандамаев. Иран при первых Ахеменидах. М., 1963, էջ 175։

21 C. Toumanoff, Studies in Christian Caucasian History, Georgetown University press., 1963, էջ 283։

պես Օրոնտես, մյուս կողմից, ևս եղել են Հայաստանի սատրապներ, Հյուդարնես՝ Դարեհի զինակցի և Օրոնտասի՝ Արտաքսերքսես II փեսայի կառավարման տարիների միջև ընկած ժամանակաշրջանում»[22]։ Ի՞նչ կարելի է ասել Հյուդարնեսի և հյուդարնյանների մասին։

Հյուդարնեսի անվանը մենք առաջին անգամ հանդիպում ենք մ. թ. ա. 521 թ. Աքեմենյան Պարսկաստանում տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ։ Եգիպտոսում բռնկած ապստամբությունները ճնշելու համար Կամբյուսեսը մեկնում է այնտեղ։ Շուտով նա լուր է ստանում, որ եղբայրը՝ Բարդիան, Պարսկաստանում ապստամբել է և իրեն հայտարարել թագավոր։ Նա անմիջապես թողնում է Եգիպտոսը, բայց ճանապարհին մահանում է։ Իսկ ժամանակ անց Դարեհը վեց նշանավոր պարսիկների հետ դավադրություն է կազմակերպում Բարդիայի դեմ՝ անվանելով նրան Գաումատա (մոգ) և իշխանությունը կենտրոնացնում իր ձեռքում։ Բիսիթունյան[23] արձանագրության վերջում մենք հանդիպում ենք դավադիր պարսիկների անունների, որին հետևում է Դարեհի կտականման ուղերձը. «Դարեհ թագավորն ասում է,— դու, որ հետագայում պետք է դառնաս թագավոր, լավ պահպանիր այս այրերի տոհմը»[24]։ Հյուդարնեսի անունը Բիսիթունյան արձանագրությունում պահպանվել է պարսկական Վիդարնա (Vidarna) ձևով, Հերոդոտը նրան անվանում է Հյուդարնես[25] (Ὑδάρνης). Կտեսիասը՝ Իդերնես (Ἰδέρνης)[26]։ Բիսիթունյան արձանագրությամբ ապավում են Դարեհի ժամանակակից Հյուդարնեսի մասին տեղեկությունները։ Հաջորդ Հյուդարնեսը առաջինի որդին էր, նշանավոր զորավար։ Հոր կենդանության ժամանակ ղեկավարում էր պարսիկների արշավանքը դեպի Հունաստան։ Նա «անմահների» գնդի հրամանատարն էր։ Հերոդոտը, Պավսանիասը բազմիցս հիշատակում են այս Հյուդարնեսին, որը ղեկավարում էր Թերմոպոլի ճակատամարտը։ Մի երրորդ Հյուդարնես, որը երկրորդի որդին կամ թոռն էր, հիշատակվում է Կտեսիասի[27] մոտ։ Այս Հյուդարնեսը հայրն էր Տերիտուքմես (Τεριτουχμης), Տիսաֆերնես (Τισσαφέρνης) և Ստատեիրա (Στατειρα) անուններով անձնավորությունների։

Այնքան գայթակղիչ է եղել հին աշխարհի խոշոր աշխարհագետ Ստրաբոնի վկայությունը, որ ուսումնասիրողները աչքաթող են արել Հերոդոտին, որ գրում է. „...Ὁ δὲ Ὑδάρνης ἦν μὲν γένος περσικὸς στρατηγὸς δὲ τῶν παραθαλασσίων ἀνθρώπων τῶν ἐν τῇ Ἀσίᾳ“ (Հյուդարնեսը, ծագումով պարսիկ, եղել է Ասիայի մերձափնյա ժողովուրդների կառավարիչը)[28]։ Քսենոփոնի «Անաբասիս» աշխատության վերջին՝ VII գրքի 25-րդ հատվածում Փյունիկիայի և Արաբիայի սատրապ հիշատակվում է ոմն Դերնես „Φοινίκης καὶ Ἀραβίας Δέρνης“

---

22 Գ. Տիրացյան, «Անաբասիսը» և Հայաստանը, էջ 230։

23 Beh., IV, 80—86

| | |
|---|---|
| Vindafarna | Vidarna |
| Utāna | Bagabuxsa |
| Gaubaruva | Ardumanīš |

24 Բիսիթունի արձանագրության լրիվ տեքստը տե՛ս Դանդամաևի նշված աշխատությունում, էջ 262—270, Beh., IV, 86—88։

25 Herod., III, 70, VI, 133.

26 Ktes., Pers., 14.

27 Նույն տեղում, 53, 54։

28 Herod., VII, 135.

Դերնես անունը Յուստիի[29] պարսկական անձնանունների բառարանում նուիրացվում է Հյուդարնես անվանը, որով, մեր կարծիքով, ամրապնդվում է Հերոդոտի վկայությունը։ Հետևելով Հերոդոտի և Քսենոփոնի վկայություններին, մենք գտնում ենք, որ Հյուդարնեսը Միջերկրական ծովի (և ոչ թե Սև) ափին ապրող ժողովուրդների սատրապն էր։ Հնարավորություն ունենք մեկնաբանել նաև Ստրաբոնի վկայությունը։

Կտեսիասը[30] և նրան հետևելով Պլուտարքոսը վկայում են, որ Արտաքսերքսես Մնեմոնը ամուսնացած էր վերը հիշատակված Հյուդարնեսի (3-րդ) Ստատեիրա դստեր հետ, իսկ նույն Հյուդարնեսի որդին՝ Տերիտուքմեսը, Արտաքսերքսեսի Ամիստրիս (Αμιστρις) տնունով քրոջ հետ։ Նա գրում է. „Ἀρσαχης δε ο του βασιλεως παις, ο και υστερον μετονομασθεις Ἀρταξερξης, γαμει την Ὀξατρου θυγατερα Στατειραν (Իսկ Արշակը, թագավորի որդին, որը հետագայում վերանվանվեց Արտաքսերքսես, ամուսնանում է Հյուդարնեսի դստեր՝ Ստատեիրայի հետ)։

Հյուդարնեսի դուստր Ստատեիրան Արտաքսերքսեսի պալատում արտակարգ իրավունքներ ուներ[31]։ Պլուտարքոսի[32] վկայությամբ միայն նրա զավակներն էին համարվում դահի օրինական ժառանգներ։ Այսպիսով, Ռոդոգունեի միջնորդությամբ, որը Հյուդարնեսի թոռն էր և Արտաքսերքսեսի աղջիկը, Օրոնտեսը աղդական է դառնում միաժամանակ և՛ Հյուդարնյաններին, և՛ Աքեմենյաններին։ Ուրեմն, Ստրաբոնի վկայությունն ու Կոմագենեի Նեմրուդ լեռան արձանագրության վկայությունը լրացնում են միմյանց և ոչ թե հակասում։ Հայտնի է, որ Փոքր Ասիայի շատ թագավորներ իրենց ծագումը կապում էին նշանավոր պարսիկներից որևէ մեկի անվան հետ[33]։ Աքեմենյան տրադիցիա-

---

29 F. Justi, Iranisches Namenbuch. Marburg, 1895, էջ 368։

30 Կտեսիասը, ազգությամբ հույն, Արտաքսերքսես Մնեմոնի ժամանակակիցն էր ու նրա պալատական բժիշկը։ Նա գրել է «Պարսկաստանի պատմությունը» („τα περσικα"), որը, ըստ հեղինակի, հիմնված է եղել պարսկական թագավորների գործունեության մասին պատմող թագավորական մատյանների վրա („εκ των βασιλικων διφθερων")։ Աշխատության 23 գրքերից մեզ հասել են միայն հատվածներ Դիոդորոսի, Հուստինոսի, Պոլիենոսի և ուրիշների միջնորդությամբ։ Աշխատությունը պարունակում է պարսիկների կյանքին վերաբերող կենցաղային մանրամասներ։ Կտեսիասի աշխատության արժանահավատությունը կասկածի է ենթարկվում։ Բայց քանի որ նա Արտաքսերքսեսի ժամանակակիցն էր ու նրա պալատական բժիշկը, ինչպես գրում է Պլուտարքոսը (Artax., I), ապա դժվար է պատկերացնել, որ նրան հայտնի չլիներ գոնե Արտաքսերքսեսի, նրա կնոջ և որդիների անունները։

31 Դարեհն ամուսնացած էր Կյուրոսի աղջկա՝ Աթոսայի և Կամբյուսեսի ու Բարդիայի հարեմում գտնվող բոլոր կանանց հետ։ Խորամանկ ու փառասեր Աթոսան Դարեհի արքունիքում հասնում է արտակարգ վիճակի՝ դառնալով ամենազոր։ Աթոսան հայտարարվում է գլխավոր թագուհի։ Վաղ շրջանի հունական հեղինակները Շամիրամի օրինակով նրան ներկայացրել են որպես լեգենդար թագուհի։ Սկսած Աթոսայից, պարսկական արքունիքում հաստատված կարգի համաձայն, թագավորի կանանցից մեկը համարվում էր գլխավոր, ուներ թագ կրելու իրավունք, սեփական եկամուտներ և ստրուկներ։ Տե՛ս Herod., IV, 66, 68, VIII, 3 (η γαρ Ατοσσα ειχε το παν κρατος). Ktes., Pers., 20; Arrian, Anab., Alex., II, 11, 12։

32 Ստատեիրայի մասին տես Plut., Artax., V, VI, XVII, XIX և այլն։

33 Կապադովկիայի Արիարաթյանները իրենց սերված էին համարում նշանավոր պարսիկ Օթանայից (Дандамаев, էջ 174)։ Պոնտոսի թագավոր Միհրդատ IV (մ. թ. ա. III դար) իրեն նույնպես համարում էր յոթ պարսիկներից մեկի հետնորդը։ Նա ապացուցում էր, որ իր նախնիները նույնպես մասնակցել են դավադրությանը։ Ի նշան երախտագիտության նրանք ժառանգություն են ստացել Կապադովկիան, այդ իսկ պատճառով իրավունք ունեն գրավելու այն (Polyb., 43, 2, հմմտ. Diodori, XIX, 40, 2)։ Նույնպիսի պահանջներով հանդես էր գա-

ների կենսունակության պայմաններում սատրապ Օրոնտեսի՝ Արտաքսերքսես Մնեմոնի աղդականը լինելու փաստը, անշուշտ, ամեն առիթով ուռճացվել է։

Երվանդունիների ծագման վերջին՝ բակտրիական վերսիան չի առնչվում հունա-հռոմեական աղբյուրներին։ Այն պահպանվել է Պերգամոն քաղաքից 12 կմ հեռավորության վրա գտնվող Բորիաջիք վայրում գտնված արձանագրությունում։ Արձանագրությունն առաջին անգամ հրատարակել է Թ. Ռեյնաքը[34]։ Վերջինիս կարծիքով արձանագրությունը մ. թ. ա. IV դարի վավերագիր է։ Այն վնասված է, որոշ տողեր ամբողջությամբ չեն պահպանվել։

1. [μονα)ρχία,... διὸ....
2. κατ)ετος ἕκα[στ]ον. Καὶ πρῶτος ἐπρυτ[άνευσεν
3. ...ας καὶ ἐξ ἐκείνου μέχρι νῦν πρυτά[νεις ἀεὶ
4. διατελοῦσιν. Ὀροντης δὲ Ἀρταχυ[ρου]
5. τὸ γένο]ς βάκτριος, ἀποστὰς ἀπὸ Ἀρταξέρ[ξου τοῦ
6. περ]σῶν βασιλέως ἐκράτησεν τῶν περγα[μηνῶν
7. καὶ μ]ετῴκισεν αὐτοὺς πάλιν ἐπὶ τὸν κο[λωνὸν
8. εἰσ]τὴν πα[λαι]ὰν πόλιν. εἶτα Ὀροντης. .
9. ...τὴν πόλιν ἐ]πι[τρεψας Ἀρταξ]έρξῃ ἀπέθανεν.

(...մոնարխիա... և առաջին պրիտանը եղավ... և մինչև այսօր պրիտանները միշտ իրար հաջորդել են։ Արտասուրայի որդի Օրոնտեսը, ծագումով բակտրիացի, ապստամբելով պարսիկների թագավոր Արտաքսերքսեսից, պերգամցիներին նվաճեց և տեղափոխեց նրանց դարձյալ դեպի ծովածոցը, նախկին քաղաքը։ Հետո Օրոնտեսը քաղաքը Արտաքսերքսեսին վերադարձնելով, մահացավ)։

Արձանագրության բովանդակությունից հասկացվում է, որ Օրոնտեսի պատմությունն այստեղ միջանկյալ նշանակություն ունի, իսկ Պերգամոն քաղաքինը՝ առաջնային։ Մեկից չորրորդ տողերից պարզվում է, որ Պերգամոնում վերացել էր մոնարխիան և քաղաքը ղեկավարվում էր պրիտանների կողմից։ Վերջիններս մ. թ. ա. IV դարում թագավորից հետո երկրորդ անձնավորությունն էին։ Հավանաբար առաջին պրիտանը թագավորի ընտանիքից էր և նրա անունն ավարտվել է... աս -ով։ Պերգամոնում այդ վիճակը տևել է մինչև նշված իրադարձությունների ժամանակը։ Օրոնտեսի անունը հիշատակվում է քաղաքին պատահած դժբախտության կապակցությամբ։ Թե ինչ հանգամանքներում և ինչ պատճառով է Օրոնտեսը վերաբնակեցրել պերգամցիներին, հայտնի չէ։ Համենայն դեպս այդ իրադարձությունները ցնցող տպավորություն են թողել ժամանակակիցների վրա։ Ապացույցը մեզ հասած այս գրավոր վավերագիրն է։ Արձանագրության հեղինակն, անշուշտ, Օրոնտեսը չէ. հավանաբար, ավելի ուշ, այն թողել են քաղաքի ղեկավարները։ Այս հանգամանքը մեզ հնարավորություն է տալիս ենթադրելու, որ Օրոնտեսի՝ բակտրիացի հորջորջումը թյուրիմացության արդյունք կարող է լինել։ Բանն այն է, որ հնում Բակտրիա քաղաքը և Բակտրիանա երկիրը հայտնի են եղել նաև Զարիաս-

---

լիս նաև Պոնտոսի Արտարազես թագավորը [...Artabazes a septum Persis oriundus], Annaeus Florus, XL 15, 1։ Bellum Mithridaticum)։ Վերջապես Կոմագենեի Անտիոքոս Ա-ն փաստորեն իր ծագումը Երվանդունիների միջոցով կապել էր Աքեմենյաններին։

34 Ռեյնաքը արձանագրությունն առաջին անգամ հրատարակել է Les origines de la ville de Pergam, Revue Historique, Paris, 1886, № 32. Նա արձանագրության չորրորդ

պա անունով։ Հայաստանում մենք ունենք Զարասպ[35] անունով լեռը, որի անունն աղերսակցվում է Զարիասպային։ Զարասպ լեռը գտնվում է Արդինի-Մուսասիր երկրի տերիտորիայի վրա, Կելիշին լեռնանցքից հարավ և ունի 3497 մետր բարձրություն[36]։ Նրա ժամանակակից անունն է Սիահ-կուհ։ Պլինիոսի[37] հիշատակության համաձայն Aroandes ցեղը բնակվում էր Գավգամելա քաղաքից արևելք՝ այսինքն նույն Արդինի-Մուսասիր երկրում։ Այս փաստերը մեզ թույլ են տալիս ենթադրելու, որ Պերգամոնի արձանագրության մեջ հիշատակված «Բակտրիան» թյուրիմացության արդյունք է՝ առաջացած աշխարհագրական նման տեղանունների նույնացման հողի վրա՝ Զարիասպ (Բակտրիա)—Զարասպ։

* * *

Ամփոփելով վերը ասածը պետք է եզրակացնել, որ Երվանդունիների հայկական դինաստիան (ըստ Մ. Խորենացու վկայությունների) իր ծագումն առել է մ. թ. ա. VI դարի սկզբներին։ Աքեմենյանների ժամանակ՝ մ. թ. ա. V դարում, հայկական թագավորության տերիտորիայի վրա կազմված սատրապությունում իշխել են Երվանդունի դինաստիայի ներկայացուցիչները՝ ըստ որում 520 թ. մինչև 401 թ. ժամանակահատվածի համար մենք ունենք Կոմագենեի արձանագրությունում հիշատակվող Արոանդես (№ 4) և Արտասուրա (№ 5), որոնց մասին գրավոր աղբյուրները ոչինչ չեն հաղորդում։ Արոանդեսից առաջ եղել են ևս երկու անուններ, որոնք, ինչպես նշել ենք վերը, ջնջված են և անընթեռնելի։ Մենք հավանական ենք համարում, որ ջնջված անուններից գոնե մեկը թերևս եղել է նույնպես Արոանդես։

Արտասուրայի ժամանակ, անշուշտ, Հայաստանի քաղաքական դերը նշանակալից էր, որի հետևանքով էլ Արտաքսերքսես Մնեմոնը ազգակցական կապի մեջ է մտնում Երվանդունիների հետ՝ իր դուստր Ռոդոգունեին կնության

---

տողի Ա[illegible]. ...վերականգնել է Արտաքսերքսես, հաջորդ՝ հինգերորդ տողի առաջին բառի [illegible] կարդում է [illegible] այսինքն «Արտաքսերքսեսի փեսան, բակտրիացի»։ Երկրորդ անգամ արձանագրությանը անդրադարձել է չորս տարի անց, երբ հրատարակվեցին Կոմագենեի վերը նշված արձանագրությունները։ Այս անգամ նա արձանագրությունը կարդաց այնպես, ինչպես բերել ենք վերևում։ Այս տեքստը վերջնականապես ընդունված է։ Տե՛ս La-dinastie de Commagene, Revue dés études graecques. Paris, 1890, հ. III, նաև՝ Jalabert and R. Mouterd. Inscriptions grecques et latines de la Syrie I, Commagène et Cyrrhestique, Paris, 1928, 11, 4։

35 Զարասպ անվանը մենք հանդիպում ենք Սեբեոսի մոտ. տե՛ս «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Երևան, 1939։ Վահրամ Չուբինը նախարարներին խոստանում է, որ եթե ինքը հաղթի, Հայկական թագավորությունը կվերականգնի իր նախկին սահմաններով «...Եւ թողում ձեզ զամենայն երկիրն Հայոց մինչև ցԿապկոհ և ցդուռն Աղվանից, և յԱսորւոց կողմանէ՝ զԱրուաստան, զՄծուին և զնոր Շիրական մինչև ցսահմանս Տաճկաց, զի առ նախնեաւքն իսկ ձեզ լեալ է, և ընդ արեւմուտս մինչև ցԿեսարիա Կապադովկացւոց։ Եւ ես մի իշխեցից քան զԶարասպ անցանել յայնկոյս...» գլ. Ը, էջ 39, կամ «և անցանէ առ սահմանաւն առ ամուր աշխարհաւն մարաց և հասանէ ի լեառն Զարասպ, և անցանէ առ նոր Շիրակ երկրաւն», գլ. Ը, էջ 9, հմմտ. նաև գլ. ԼԵ, էջ 95 «...Եվ նորա անկեալ յայնկոյս լերինն Զարասպայ յերկիրն Ասորեստանեայց»։

36 Ս. Տ. Երեմյան, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 51, հմմտ. նաև Հայկական առաջին պետական կազմավորումները, էջ 113։

37 Plin., NH, VII, 1, 18.

տալով նույն Արտասուրայի Արոանդես որդուն։ Այս հանգամանքը չի կարող խախտել Երվանդունիների հայկական ծագման մասին մեր պատկերացումները, քանի որ Երվանդյանները միայն IV դարի սկզբներից կարող էին Ռոդոգունեի միջնորդությամբ առնչվել և՛ Հյուդարնյաններին և՛ Աքեմենյաններին, այն էլ միայն մայրական գծով։ Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ, ինչպես նշեցինք վերը, Խորենացին Երվանդ վերջինին համարում էր Արշակունի ցեղի կնոջ որդի, Սեբեոսի մոտ նույնպես հիշատակվում է Արշակի որդի Երվանդը «Երուանդ որդի Արշակայ»[38]։

## К ВОПРОСУ О ПРОИСХОЖДЕНИИ ДИНАСТИИ ЕРУАНДИДОВ

Ж. Г. ЭЛЬЧИБЕКЯН

(Резюме)

В историографии до сих пор нет единого мнения о непрерывности династии Еруандидов. Окончательно не решена также проблема происхождения династии.

Рассматривая источники о происхождении династии Еруандидов, автор выясняет, что род Гидарна, полководца Дария, был в родстве с персидской царской фамилией. Дочь Гидарна Статейра (V в. до н. э.) была женой Артаксеркса Мнемона (404—358 гг. до н. э.). Следовательно, сатрап Оронт (Еруанд), будучи женатым на дочери той же Статейры, Родогуне, одновременно был в родстве и с Гидарном, и с Артаксерксом Мнемоном, почему следует полагать, что свидетельство Страбона и данные надписи Антиоха Коммагенского на горе Немруд не противоречат, а дополняют друг друга.

Рассматривается также версия о бактрийском происхождении Оронтаса (Еруанда). Страна Бактрия называлась также Зариаспой. В Армении, южнее ущелья Келишин, в стране Мусасир-Ардини, была гора Зарасп. По свидетельству Плиния, племя Ороандес жило на этой территории. Упоминание «Бактрии» в надписи из Пергама надо рассматривать, возможно, как недоразумение, возникшее вследствие отождествления близких по звучанию географических названий «Зариаспа» (Бактрия)—«Зарасп».

38 Սեբեոս, գլ. Բ, էջ 10—11։